ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

«ՊՐՈՄԵԹԵՎՍ» ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՑԱԾ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1927 թ. սկզբին վտարանդիության մեջ գտնվող նախախորհրդային շրջանի վրացի, ադրբեջանցի և հյուսիսկովկասյան լեռնական որոշ քաղաքական ղեկավար գործիչներ Փարիզում հիմնադրում են «Պրոմեթևս» ամսագիրը, որի անունով էլ կոչվեց նրա տարածած գաղափարների շուրջ առաջացած շարժումը[1]: 1920–1930-ական թթ. հայկական սփյուռքում բա-

---

[1] «Պրոմեթևս» շարժման գաղափարական հիմքը հանդիսանում էր լեհ մարշալ Յոզեֆ Պիլսուդսկու այն մոտեցումը, ըստ որի Լեհաստանի անկախության հիմնական երաշխիքը տրոհված Ռուսաստանն է: Լեհաստանն էլ պետք է իր ազդեցությունը տարածեր Ռուսաստանից անկախացած ազգային պետությունների վրա: Հատուկ «Պրոմեթևս» շարժման գաղափարախոսության մշակման համար Վարշավայում հիմնվում է Արևելյան ինստիտուտ: Շարժումը ֆինանսավորվում էր Լեհաստանի Գլխավոր շտաբից, ներքին և արտաքին գործերի նախարարություններից: Պայքարի կովկասյան ճակատն ուժեղացնելու նպատակով լեհերը գործի մեջ ներառեցին թուրքերին, որոնք հետագայում փորձում էին իրենց ցանկացած ուղղությամբ տանել շարժումը: Պատմաբան Արսեն Ավագյանը գրում է, որ «Պրոմեթևս» շարժման հետ կապված լեհական իշխանությունների հույսերը չարդարացան, քանի որ վերջիններիս չհաջողվեց կովկասյան քաղաքական վտարանդիությանը միավորել անգամ հակախորհրդային շահերի համնկնման պարագայում: Ընդ որում, ընդգծելի է համարվում հայ քաղաքական վտարանդիության ինքնուրույն գործելու հանգամանքը: Լեհերը չէին հաշվարկել Թուրքիային պրոմեթևսական շարժման մեջ ներքաշելու բոլոր նրբությունները: Թուրքերը, թեև ցանկանում էին վերահսկել կովկասյան վտարանդի քաղաքական ուժերին, սակայն խուսափում էին ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները լարելուց: Ի դեպ, թուրքերի այս դիրքորոշումով պայմանավորված էր նաև այն հանգամանքը, որ վրացի վտարանդիները հետագայում պահանջեցին Կ. Պոլսում ստեղծված, Կովկասի անկախության կոմիտեի կենտրոնականյանը, տեղա-

վականին բուռն քննարկման արժանացավ «Պրոմեթևս» շարժման հետ Հայ Հեղափոխական Դաշնակցության ունեցած առնչության հարցը:

«Պրոմեթևս»-ը[2], որ պաշտոնապես համարվում էր «Կովկասի և Ուկրաինայի ժողովուրդների ազգային պաշտպանության կոմիտեի օրգան »[3], հենց առաջին համարում հրապարակեց հիմնադիրների նպատակը՝ ստեղծել միասնական անկախ պետություն, որը ձեւավորվելու էր հետևյալ սկզբունքների շուրջ. համատեղ պայքար բոլշևիկյան բռնատիրության դեմ, միասնական արտաքին քաղաքականություն, բանակ, ֆինանսադրամական և մաքսային համակարգ, հաղորդակցության միջոցների, երկաթուղու, փոստ-հեռագրի միություն[4]:

Իր առաջին կոչով «Պրոմեթևս»-ը հայտարարում էր, թե մոտենում է բոլշևիկների անկման ժամը, պետք է ստեղծել կովկասյան հանրապետությունների համադաշնություն, ուստի անհրաժեշտ է կռվել ռուսական բռնապետական իշխանության դեմ[5]:

«Պրոմեթևս»-ի հիմնադրման գործընթացին պաշտոնապես ոչ մի՛ վտարանդի հայկական քաղաքական կազմակերպութ-

---

փոխել Փարիզ (տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920–1971), Երևան, 2011, էջ 168–175):

[2] «Պրոմեթևս»-ի հիմնադիրներն էին՝ վրացի մենշևիկ Նոյ Ռամիշվիլին, ազգային-դեմոկրատ Գեորգի Գվազավան, Ադրբեջանի ազգային-դեմոկրատական կուսակցության հիմնադիր Խոսրով բեկ Սուլթանովը, մուսավաթի պարագլուխ, հայտնի պանթուրքիստ Մեհմեդ էմին Ռասուլ-Զադեն, Լեռնականների հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար դաղստանցի Հայդար Բամմատը: Ամսագրի պաշտոնական խմբագիրը Գվազավան էր (տե՛ս «Յուսաբեր», 17 յունիսի 1927 թ.):

[3] Տե՛ս «Դրօշակ», 1927 թ., փետրուար, էջ 36:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 37:

[5] Տե՛ս Շահան, Թիւրքիզմը Անգօրայէն Բագու եւ թրքական օրիէնտասիօն (քննադատական հայ քաղաքական մտքի), Աթէնք, 1928, էջ 133:

յուն, այդ թվում և Հ. Յ. Դաշնակցությունը չմասնակցեց: Սակայն վերջինս հիմնադիրների կողմից առաջարկ ստացավ միանալու իրենց ստեղծած շարժմանը: Եվ այս հանգամանքն էլ հետաքրքիր քննարկումների և բախումների առիթ հանդիսացավ: Խնդիրը քննարկվում էր տարբեր տեսանկյուններից: Իրականում «Պրոմեթևս»-ը ոչ միայն միասնականության, այլ նաև քաղաքական կողմնորոշման խնդիր էր դնում՝ Ռուսաստան կամ Թուրքիա՝ ակնհայտորեն նախապատվությունը տալով վերջինին: Այս առումով քննարկումներն ու բախումներն ավելի սուր եղան:

Այսպես՝ Հ. Յ. Դաշնակցության պաշտոնաթերթ «Դրօշակ»-ի 1927 թ. փետրվարի համարում վերլուծվում է «Պրոմեթևս»-ի ստեղծման պատճառները[6]: Հոդվածագիրը հետաքրքիր գնահատական է տալիս դրանց. «այն, ինչ իբր «1918-ի մայիսին շղթայ էր ու կապանք «կովկասեան ժողովուրդների» համար, այսօր դառնում է ազատութիւն ու բարգաւաճումը ապահովող լավագոյն միջոց... Դառն է շատ պատմութեան հեգնանքը»[7]: Սրանով պարզ հասկացվում էր այն, որ նույն Նոյ Ռամիշվիլին, ով 1918 թ. մայիսին որևէ հեռանկար չէր տեսնում Անդրկովկասյան Դաշնության համար և արագացնում էր Սեյմի կազմալուծումը, ընդամենը մի քանի տարի անց անդրկովկասյան ժողովուրդների փրկությունը տեսնում է համադաշնության մեջ, որի համար պայքարի էր դուրս գալիս խորհրդային իշխանությունների դեմ:

«Պրոմեթևս»-ը չէր հստակեցնում Թուրքիայի, Ռուսաստանի հետ արտաքին, ինչպես նաև կովկասյան հանրապետութ-

---

[6] Հոդվածն արտատպվել է նաև Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթի 1927 թ. փետրվարի 12–16-ի թիվ 267–270 համարներում:

[7] «Դրօշակ», 1927 թ., փետրուար, էջ 37:

յունների ներքին սահմանները, որը «Դրօշակ»-ի համար շատ տարակուսելի էր[8]:

Այսպիսով՝ «Պրոմեթևս»-ի հիմնադրումից անմիջապես հետո արձանագրվում էր այն փաստը, որ 1918 թ. միասնական Անդրկովկասի կազմալուծումը նախաձեռնող քաղաքական գործիչները հանդես են գալիս այն վերականգնելու և միասնական ուժերով բոլշևիզմի դեմ պայքարելու կոչով: Հենց այս կտրուկ շրջադարձն էլ առիթ տվեց դաշնակցականներին խիստ վերապահումներով մոտենալ կովկասյան ժողովուրդների վտարանդի քաղաքական գործիչների անկեղծությանը:

Դաշնակցական մեկ այլ պարբերականի՝ Կահիրեում հրատարակվող «Հուսաբեր» օրաթերթի խմբագիր Վահան Նավասարդյանը ևս անդրադարձել է «Պրոմեթևս»-ի հիմնադրմանը: Թերթի 1927 թ. փետրվարի 19-ի խմբագրականում նա գրում է, որ այս դաշինքն ունի ընդգծված հակաբոլշևիկյան և հակառուսական գաղափարական-քաղաքական ուղղվածություն: Նավասարդյանի համար մտահոգիչ փաստն այն է, որ Անդրկովկասի երկու ժողովուրդներ ձգտում են անկախության՝ առանց հայերի համաձայնության կամ մասնակցության: Ավելին՝ վրացիների և ադրբեջանցիների համար հայերի կարծիքը կարևոր չի եղել, այլապես այդ միությունը չէր լինի առանց վերջիններիս ներկայացուցիչների մասնակցության: «Մինչդեռ, – գրում է Վ. Նավասարդյանը, – այն կազմուել է ոչ միայն առանց մեր մասնակցութեան, այլ նաեւ հակառակ մեր հավանութեան»[9]:

1920–1930-ական թվականների դաշնակցական ամենաազդեցիկ թերթերից մեկը՝ «Հուսաբեր»-ը, բազմակողմանի վերլուծության է ենթարկում «Պրոմեթևս»-ի հիմնադրումը և մեկնաբանում Հ. Յ. Դաշնակցության մոտեցումներն այս կա-

---

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

[9] «Յուսաբեր», 19 փետրուարի 1927 թ.:

պակցությամբ: Թերթի համար մտահոգիչ է հայերի բացակայությունը կովկասյան վտարանդիների այս նախաձեռնությունից: Ավելին, ըստ «Հուսաբեր»-ի, թուրքերի հանդեպ հայության վանող մոտեցումն է եղել պատճառը, որ կովկասյան հարևանները լրջորեն չեն տրամադրվել հայերին ևս ներգրավելու իրենց շարժման մեջ[10]: Պետք է նշել, որ Դաշնակցության նման մոտեցումն ուներ իր պատճառաբանությունը, որի հիմքում ընկած էր Թուրքիայի չփոփոխվող հակահայ դիրքորոշումը:

«Պրոմեթևս»-ի հիմնադրումից հետո հայ վտարանդիության շրջանակներում քննարկվող քաղաքական կողմնորոշման հարցի կապակցությամբ դաշնակցական մեկ այլ ականավոր գործիչ, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Արտաշես Աբեղյանը գրում է. «Հայաստանի քաղաքական ճակատագիրը այսօր շատ աւելի մեծ չափերով է կապւած Անդրկովկասի հետ, քան երբեւէ՝ մեր պատմութեան մէջ»: Նա փորձում է ակնարկել այն մասին, որ հայ ժողովուրդը հանգամանքների բերումով դարձել է կովկասյան ժողովուրդ, և անպայման պետք է հաշվի առնել այդ հանգամանքը՝ մեր ճակատագիրը կապելով անդրկովկասյան ժողովուրդների հետ[11]: Աբեղյանն առաջարկում է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս, որ հայ-թուրքական թշնամությունից օգտվում է վրացին, ընդ որում՝ ի վնաս մեզ:

---

[10] «Հուսաբեր», 23 փետրուարի, 13 մայիսի, 17 յունիսի 1927 թ.:

[11] Աբեղեան Ա., Հայաստան եւ արտաքին հարեւաններ (ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք» ամսագիր, 1929 թ., դեկտեմբեր, էջ 111: Հայդար Բամմատի ցուցումներով վրացի վտարանդի հասարակական գործիչ և պատմաբան Զուրաբ Ավալովը փորձում էր համոզել հայերին, որ իրենք Արևմտյան Հայաստանի կորստով արդեն կովկասյան ժողովուրդ են դարձել (տե՛ս Мамулиа Георгий, Его высшим политическим идеалом была Кавказская конфедерация: Гайдар Баммат и группа "Кавказ" (1934–1939), Историко-культурный журнал "PROMETHEUS", N 5, http://www.chechen.org/page.9,393-zhurnal-chast.html).

Այսպիսով, մեծանուն մտավորական, դաշնակցական գործիչ Ա. Աբեղյանը հանդես է գալիս, մեր կարծիքով, խիստ իրապաշտական դիրքերից՝ առաջարկում է հաշվի առնել հանգամանքների բերումով հայերի կովկասյան ժողովուրդ դառնալու իրողությունը: Ըստ նրա՝ արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում, հարկ եղած դեպքում պետք է հրաժարվել բոլոր նախապաշարումներից և սառը դատողությամբ առաջնորդվել միայն Հայաստանի իրական շահի գիտակցումով:

«Պրոմեթևս»-ի շուրջ հիմնական խմորումներն ընթանում էին Փարիզում: Այս տեսակետից շատ կարևոր է այստեղի «Հառաջ» օրաթերթի մոտեցումները: Այսպես՝ ծանոթանալով «Պրոմեթևս»-ի առաջին համարին, թերթը գրում է. «Կարելի չէ համադաշնակցային անկախ պետութեան մը մասին խօսիլ, առանց ցոյց տալու անոր հողային կառուցուածքը լրիւ և առանց գծելու անոր սահմանային պատկերը, արտաքին և ներքին բաժանումներով»[12]: Այստեղ ևս մտահոգություն է հայտնվում, որ պրոմեթևսականներն ուղղորդվում են Թուրքիայի կողմից:

Հ. Յ. Դաշնակցության բարձրագույն ղեկավարությունը ևս «Պրոմեթևս»-ին կուսակցության միանալու առաջարկին քննադատական մոտեցում ցուցաբերեց: Կուսակցության բյուրոյի անդամ Ռուբեն Տեր-Մինասյանը հետևյալն է գրում. «Մենք չենք կարող միանալ, որովհետև զիջում չի լինում այդ անպիտանների կողմից»[13]: Զիջում ասելով Ռուբենն ի նկատի ուներ կովկասյան հարեւանների կողմից հայերի իրավունքների ընդունումը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հողերի վրա:

---

[12] «Յառաջ», 3 մարտի 1927 թ.:

[13] «Ռուբենի նամակները», «Հայրենիք» ամսագիր, 1963 թ., էջ 21:

Այսպիսով՝ «Պրոմեթևս» հանդեսի հրատարակումը և նրա շուրջ ձևավորված շարժումը հիմնականում քննադատության ենթարկվեց տարագրության մեջ գտնվող դաշնակցական գործիչների և դաշնակցական մամուլի կողմից: Քննադատվում էր շարժման թուրքամետ ուղղվածությունը, կովկասյան ոչ բոլոր ժողովուրդների շահերը հաշվի առնելը և այլն: Ապահովված չէր կովկասցիների պայքարի ճակատի միասնականությունը: Պրոմեթևականներն իրականում լուրջ քայլեր չձեռնարկեցին այդ միասնականության համար:

Ժամանակի ՀՅԴ բյուրոյի մեկ այլ անդամ՝ Շահան Նաթալին, սակայն, այլ վկայություններ է տալիս: Նրա տեղեկացմամբ՝ 1926 թ. նոյեմբերին վտարանդիության մեջ գտնվող Ադրբեջանի ազգային-դեմոկրատական կուսակցության հիմնադիր Խոսրով բեկ Սուլթանովը ժամանում է Փարիզ և այցելում այստեղ գտնվող ՀՅԴ բյուրոյի անդամ Սիմոն Վրացյանին, առաջարկում մասնակցել «Պրոմեթևս» շարժմանը: Նա հույս ուներ ՀՅԴ միջոցով հայերին ևս ներգրավել շարժման մեջ[14]:

Շ. Նաթալին հանգամանորեն անդրադարձել է «Պրոմեթևս»-ի հիմնադրման պատմությանը և պատճառներին: Նա որոշ դաշնակցական ղեկավար գործիչների մեղադրել է«Պրոմեթևս»-ի հետ համագործակցելու մեջ և անխնա քննադատել նրանց: Նաթալին բնական է համարում, որ Հայաստանը դեմ չէ և չի էլ կարող լինել Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի, Դաղստանի անկախությանը: Սակայն նա այլ տեսանկյունից է հարցադրում կատարում. «... Ճի՞շդ է, որ անկախութիւնն է կովկասեան ժողովուրդներու միութեան առանցքը, թէ միայն անկախութիւնը Ռուսաստանէն եւ կախումը Թուրքիայէն, այսինքն՝ միայն տէր փոխելը, մինչեւ անգամ իրենց, «անկեղծ»

---

[14] Տե՛ս Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները, հ. Բ, Մարսէյլ, 1935, էջ 80:

ձգտումներուն հակառակ»[15]: Նրա կարծիքով՝ կովկասյան այդ միության իրական բովանդակությունը թուրքական կողմնորոշումն է, ուստի Վրաստանը, Դաղստանը և, առավել ևս, Ադրբեջանը կարող են, կամ նույնիսկ պարտավոր են ունենալ թուրքական կողմնորոշում, իսկ հայերը՝ ոչ: Նա ռուսների և թուրքերի տարբերությունը ներկայացնում է հետևյալ տպավորիչ բանաձևմամբ. «ռուսը դէմ է Կովկասի ժողովուրդներու անկախութեան եւ ազատ զարգացման, իսկ թուրքը դէմ է Կովկասի ժողովուրդներու գոյութեան»[16]:

Շ. Նաթալին գտնում է, որ «Պրոմեթևս»-ի հիմնադիրները, չնայած իրենց ծրագրի թուրքամետ ուղղվածությանը, հույս ունեին, որ հայերը ևս կմիանան իրենց նախաձեռնությանը: Նման հիմքեր, ըստ Նաթալու, տվել էին Վրացյանի թուրքամետ կեցվածքը 1921 թ. փետրվարյան ապստամբության օրերին, Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ-թրքական կնճիռը» գրքի, ինչպես նաև Ռուբեն Դարբինյանի «Հայ քաղաքական մտքի դեգերումները» հոդվածաշարի հրատարակումը («Հայրենիք» ամսագիր, 1922 թ. նոյեմբեր – 1923 թ. հոկտեմբեր), ուր թուրքերի համագործակցության գիծն էր անցկացվում[17]:

Մեր կարծիքով՝ Շահան Նաթալին թե՛ Ռուբեն Տեր-Մինասյանի, թե՛ Ռուբեն Դարբինյանի տեսակետները շատ խիստ է մեկնաբանել, որը, թերևս, պայմանավորված է նրա ունեցած առավել ծայրահեղ մոտեցումներով: Մինչդեռ վերջիններիս մոտեցումներն էլ ունեին իրենց հիմնավորումները: Օրինակ՝ Ռուբեն Դարբինյանն առաջարկում էր համագործակցել կովկասյան հարևանների հետ, այլապես հայերին կսպառնար մեկուսացման վտանգը: Ըստ նրա՝ «հայ ժողովուրդի ֆիզիքական

---

[15] Նույն տեղում:

[16] «Հայրենիք» օրաթերթ, 22 մայիսի 1927 թ.:

[17] Տե՛ս Շահան, Թիւրքիզմը Անգօրայէն Բագու եւ թրքական օրիէնտասիօն (քննարկատական հայ քաղաքական մտքի), էջ 135:

գոյութեան տեսակէտով իր անմիջական հարեւաններու թշնամութիւնը անհամեմատ աւելի վտանգաւոր է, քան Խորհրդային Ռուսիոյ թշնամութիւնը»: Հետևաբար՝ «հայկական օրիենտացիա ըսել այժմ՝ կը նշանակէ իրականին մէջ ըսել կովկասեան օրիենտացիա, բայց ոչ երբեք ռուսական կամ բոլշեւիկեան»[18]:

1925 թ. ավարտված Հ. Յ. Դաշնակցության 10-րդ ընդհանուր ժողովը հակաթուրքական որոշում էր ընդունել: Նաթալին պնդում է, որ այդ որոշումից շեղվելու համար պետք էր նոր ընդհանուր ժողով գումարել: Նա գրում է, թե իբր «Պրոմեթևս»-ի հիմնադիրներից Խոսրով բեկ Սուլթանովը, նախապես իմանալով ՀՅԴ ընդհանուր ժողովի հակաթուրք որոշումների մասին, բավարարվել է հայերի անհատապես մասնակցությամբ՝ պայմանով, որ այդ անհատները լինեին Ս. Վրացյանը և Ռ. Տեր-Մինասյանը: Ըստ նրա՝ 1926 թ. դեկտեմբերի 29-ին ՀՅԴ բյուրոն որոշեց անհատապես մասնակցել «Պրոմեթևս»-ի աշխատանքներին[19]: Եթե Ս. Վրացյանը կամ մյուսները փորձել են համագործակցել «Պրոմեթևս»-ի հետ, ամեն դեպքում, տեղին չէ այն մեղադրանքը, թե իբր նրանք ցանկացել են «Պրոմեթէական շարժումը դարձնել Հ. Յ. Դաշնակցութեան կուսակցական դաւանանքը»[20]:

Շ. Նաթալին, ի տարբերություն դաշնակցական այլ գործիչների, պնդում է, որ Դաշնակցության բյուրոյի մի հատվածը, այնուամենայնիվ, հակված էր համագործակցելու «Պրոմեթևս»-ի հետ, ինչը, նրա կարծիքով, անընդունելի էր: «Պրոմեթևս»-ը, ունենալով թուրքամետ բնույթ, չէր կարող ծառայել հայ ժո-

---

[18] Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք» ամսագիր, 1923 թ., հոկտեմբեր, էջ 141:

[19] Տե՛ս Շահան, Ալեքսանդրապօլի դաշնագրէն 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները, հ. Բ, էջ 85–87:

[20] Վեհապետեան Թ., Նոր սերունդը՝ քաւութեան նոխազ, հ. Գ, Պէյրութ, 1986, էջ 16:

ղովրդի շահերին: Միաժամանակ, նրա համոզումով, այս մոտեցումը խորթ էր ամբողջ Դաշնակցությանը:

Դաշնակցության առավել ընդդիմադիր զանգվածի կողմից հիմնադրվեց «Մարտկոց» թերթը, որը կուսակցության ղեկավարության հրապարակային քննադատության բեմի վերածվեց[21]: ՀՅԴ բյուրոյի անդամությունից հրաժարվեց և մարտկոցական շարժմանը միացավ նաև Շահան Նաթալին: Թերթը պնդում էր, որ «Բիւրոյի «կովկասեան գործունէութեան առանցքը եղած է պրոմեթէականութիւնը: Ասիկա բացարձակ է: Պրոմեթէին հետ խօսած ըլլալուն համար չէ որ խարանեցինք զինքը ու կը խարանենք»[22]:

Հաշվի առնելով հնչեցված մեղադրանքները՝ 1932 թ. դեկտեմբերի 15-ին ՀՅԴ բյուրոն հանդես եկավ հայտարարությամբ, ուր նշվում էր, որ չարամիտ խեղաթյուրվում է «Պրոմեթևս»-ի հետ իբր «գործակցությունը» կամ «թրքասիրական քաղաքականություն»-ը: ՀՅԴ բյուրոն հետամուտ է 11-րդ Ընդհանուր ժողովի ընդունած սկզբունքներին: Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը միաժամանակ հերյուրանք էր համարում Խորհրդային Հայաստանի դեմ «զինյալ ապըստամբությունը»[23]:

Անդրադառնալով Անդրկովկասում զինված ապստամբություն սկսելու «Պրոմեթևս»-ի ծրագրերին՝ նշենք, որ դեռևս Դաշնակցության 11-րդ Ընդհանուր ժողովը (1929 թ.) հայտարարել էր, որ, դեմ լինելով խորհրդային կարգերին, դեմ է նաև այդ կարգերը բռնի տապալելուն: Կուսակցությունը նախընտրում էր պայքարը շարունակել գաղափարախոսական դաշտում:

---

[21] Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հատոր Դ, Հայ Սփիւռք, Գիրք Ա, Ֆրանսահայերու պատմութիւնը, Պէյրութ, 1975, էջ 103:

[22] «Մարտկոց», 25 յունուարի 1933 թ.:

[23] Տե՛ս «Յառաջ», 18 դեկտեմբերի 1932 թ.:

Սակայն ՀՅԴ բյուրոյի հայտարարությունից հետո էլ «Մարտկոց»-ը չփոխեց իր դիրքորոշումը: ՀՅԴ բյուրոյի վերոնշյալ հայտարարության առիթով առանձին հոդվածով հանդես էր գալիս Շահան Նաթալին: Նա գրում է, որ, իր ընդդիմախոսների պնդմամբ, չեզոքացման և լուսանցքում հայտնվելու մտավախությունն է ստիպում առնչվել պրոմեթևսական շարժմանը: Սակայն վախը չի կարող փոխել փաստերը: Եթե մեր թշնամությունը թուրքերի և ռուսների հանդեպ նշանակում է չեզոքացում կամ լուսանցքում հայտնվել, ապա այդ տրամաբանությամբ մենք պարտավորվում ենք նրանցից որևէ մեկի կողմում լինել: Միջանկյալ ուժերին հարելը ևս Նաթալին համարում է կա՛մ ռուսի, կա՛մ թուրքի կողմում լինել: Նա պնդում է, որ երկուսին էլ դեմ լինելը լավագույն տարբերակն է, որը ըստ նրա, չի նշանակում չեզոք մնալ: Հնարավոր չհամարելով իրական բարեկամությունը ո՛չ ռուսների, ո՛չ էլ, առավել ևս, թուրքերի հետ, Նաթալին անկեղծ թշնամությունը գերադասում է կեղծ բարեկամությունից[24]: Եթե հնարավոր չէ լինել անկախ և չհետևել երկուսից որևէ մեկին, Նաթալին ռուսներին համարում է չարյաց փոքրագույնը, որի «մեծագոյն պատճառն այն է, որ Ռուսիա թուրքէն նուազ թշնամի է հայութեան: Ռուսիա անկախութիւնը կը խէղդէ. Թուրքիա՝ հայութիւնը»[25]:

Խոսելով Դաշնակցության ղեկավարության՝ «Պրոմեթևս»-ի հանդեպ ունեցած, իր կարծիքով, դրական վերաբերմունքի մասին՝ Նաթալին համոզմունք է հայտնում, որ կուսակցականների բացարձակ մեծամասնությունը դեմ է թուրքերի հետ ցանկացած համագործակցությանը, ինչպիսին ենթադրում է «Պրոմեթևս»-ը: Նման պատկերացման պատճառն այն է, որ մի քանի անհատներ խոսում են այդ թեմայով, և այդ անհատները

---

[24] Տե՛ս «Մարտկոց», 20 յունուարի 1933 թ.:
[25] «Մարտկոց», 22 յունուարի 1933 թ.:

կուսակցական պատասխանատու դիրքեր ունեն: Այլապես անգամ առիթ չէր լինի խոսել այդ մասին[26]:

Դաշնակցական թերթերը ևս սուր քննադատության էին ենթարկում «Պրոմեթևս»-ի մոտեցումները՝ միաժամանակ նշելով, որ կուսակցական ղեկավար մարմինները դեմ են դրան (բյուրոյի հայտարարությունը որպես վառ օրինակ): Օրինակ՝ անդրադառնալով «Պրոմեթևս» ամսագրում Կովկասյան համադաշնության ուխտի ստորագրման կանխատեսմանը՝ «Հառաջ»-ի խմբագիրը 1932 թ. գրում է. «Կովկասեան Կոմիտէին անդամները վերջին տարիներու ընթացքին բազմաթիւ փորձեր կատարած են Հայերն ալ իրենց ետեւէն քաշելու, ուղղակի կամ անուղղակի բանակցելով Հ. Յ. Դաշնակցութեան հետ: Դաշնակցութիւնը, այս ճակատին վրայ, ունի բացորոշ բանաձեւ մը, որ թոյլ չի տար նաւարկել պղտոր ջուրերու մէջ: Կը նշանակէ թէ՝ «Կովկասեան դաշինքը» պիտի ստորագրուի, դուրս ձգելով Հայերը: Պիտի ստորագրուի՝ դառնալով տեսակ մը ճնշումի միջոց: Ուրիշ խօսքով, անգամ մըն ալ պիտի հաստատուի, որ մեր դրացիները չեն խրատուած անցեալի դասերէն, եւ կը շարունակեն իրենց ճակատագիրը կապել թրքական շարժանիւին»[27]:

Այսպիսով՝ Դաշնակցության ղեկավարությունն ու նրանց ընդդիմախոսները տարբեր ձևաչափերով քննարկում էին պրոմեթևականների հետ համագործակցության թեման: Կուսակցության մամուլը և ազդեցիկ դեմքերը պնդում էին, որ «Պրոմեթևս»-ի թուրքամետ դիրորոշումն ականհայտ է, և նրանց հետ համագործակցելու որևէ հիմք չկա:

Հետագայում «Պրոմեթևս» ամսագիրը դադարեց հրատարակվելուց: Նրա հրատարակիչները սկսեցին տպագրել «Կավ-

---

[26] Տե՛ս նույն տեղում:

[27] «Յառաջ», 1 սեպտեմբերի 1932 թ.:

կազ» ռուսալեզու հանդեսը, որը տարածում էր «Պրոմեթևս»-ի գաղափարները:

«Հառաջ»-ը շարունակեց քննադատել «Կավկազ»-ի քարոզած գաղափարները, որոնք չէին տարբերվում տարիներ առաջ «Պրոմեթևս»-ի որդեգրած սկզբունքներից: «Անոնք ալ, ինչպէս դիմակաւոր «Պրոմեթէ»ն, կովկասեան համադաշնակցութիւնը կը հիմնեն Թուրքիոյ բարեացակամութեան վրայ, կը կապեն անոր շահերուն հետ եւ կը դնեն անոր հովանաւորութեան տակ», – գրում է թերթը[28]:

1934 թ. հուլիսի 14-ին կնքվում է Կովկասյան Համադաշնակցության ուխտը, որը Ադրբեջանի կողմից ստորագրում են Ռասուլ Զադեն և Թոփչիբաշիևը, Հյուսիսային Կովկասի կողմից՝ Գիրեյ Սուեշը, Իբրահիմ Չուլիքը և Թաուսուլթան Շաքմանը, Վրաստանի կողմից՝ Ն. Ժորդանիան և Ա. Չխենկելին[29]:

Կովկասցի վտարանդիները նախատեսում էին վերականգնել իրենց կորսված անկախությունը, ստեղծել համադաշնային պետությունը, որի հիմնական սկզբունքները հետևյալներն էին. համադաշնության յուրաքանչյուր հանրապետության ներքին ազգային ինքնուրույնություն, միասնական արտաքին քաղաքականություն, միասնական բանակ, ընդհանուր օրենսդրություն և սահմանադրություն[30]: Ուխտի մեջ տեղ էր հատկացված նաեւ Հայաստանին: Սակայն Դաշնակցությունը մերժեց անդամակցել Ուխտին, որովհետև հարևանները, այնուամենայնիվ, չցանկացան ընդունել հայերի իրավունքները Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերի նկատմամբ[31]:

---

[28] «Յառաջ», 1 յունիսի 1934 թ.:
[29] Տե՛ս «Վէմ», 1934 թ., թիվ 4, էջ 126:
[30] Տե՛ս «Յառաջ», 7 սեպտեմբերի 1934 թ.:
[31] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 406, ց. 1, գ. 94, թ. 21:

Հայ հասարակական-քաղաքական միտքն անդրադարձավ նաև այդ ուխտին միանալու հայերին ուղղված հրավերին և չմիանալու պատճառներին: Ռ. Տեր-Մինասյանն իր «Կովկասյան միությունը» հոդվածում նշում է, որ կովկասցի վտարանդիների նպատակն իրականում միայն հակառուսական է և պրոթուրքական և նրանց կողմից հայերին տրված հավաստիացումները լուրջ չպետք է ընդունել[32]:

Կարծում ենք, իրականությանը չի համապատասխանում Գերսամ Ահարոնյանի այն պնդումը, թե «առանց պաշտօնապէս յարելու ուխտին (Կովկասյան համադաշնության – Խ. Ս.)՝ Դաշնակցութիւնը գործակցեցաւ այդ կազմակերպութեան հետ»[33]:

Այսպիսով՝ պրոմեթևսական շարժումը երկար մաքառումներից հետո հիմնադրումից շուրջ տասը տարի անց հանգում է Կովկասյան Ուխտի ստորագրմանը, որին հայերը մասնակցություն չունեցան:

Վրացիները, մտավախություն ունենալով Ուխտի ներսում մահմեդականների գերակշռությունից, բանակցությունների մեջ մտան հայերի հետ[34]: 1936 թ. մայիսին ստորագրեց հայ-վրացական համագործակցության համաձայնագիր[35]:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին պրոմեթևսական կովկասյան գործիչները տեղափոխվեցին Բեռլին, որտեղ նացիստների օժանդակությամբ յոթ լեզուներով հրատարակում էին «Կավկազ» հանդեսը: Հայերեն հրատարակությունն իրականացնում էր Վիգեն Շանթը:

---

[32] Տե՛ս Ռուբէն, Կովկասեան միութիւնը, «Հայրենիք» ամս., 1937 թ., մարտ, էջ 67:
[33] Տե՛ս Ահարոնեան Գ., Մեծ երազին ճամբուն վրայ, Պէյրութ, 1964, էջ 174:
[34] Տե՛ս Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 197:
[35] «Վէմ», 1937 թ., թիւ 1, էջ 64:

Այսպիսով՝ 1920-ական թվականներին կովկասյան վտարանդի քաղաքական ղեկավար գործիչների նախաձեռնությամբ ստեղծված «Պրոմեթևս» շարժումը նպատակ ուներ հասնել Խորհրդային Միությունից Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի անկախացմանը: Պրոմեթևսականներն իրենց միանալու առաջարկ արեցին նաև հայ վտարանդի ամենաազդեցիկ քաղաքական ուժին՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությանը: Դաշնակցական ղեկավարությունը, մամուլը, ինչպես նաև ներքին ընդդիմադիր զանգվածը, հաշվի առնելով «Պրոմեթևս»-ի թուրքամետ կողմնորոշումը, ընդհանուր առմամբ քննադատաբար վերաբերվեց այդ շարժմանը: Նրանց տարօրինակ թվաց մի քանի տարի առաջ միասնական Անդրկովկասի կազմալուծումն իրականացնող քաղաքական գործիչների նախաձեռնությունը համատեղ ուժերով խորհրդային իշխանությունների դեմ պայքարելու վերաբերյալ: Խիստ մտահոգիչ էր Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարում Թուրքիայի օգնությանն ապավինելու մոտեցումը:

Միաժամանակ՝ կուսակցության մեջ քննարկվեցին քաղաքական կացությունն առավել իրատեսական գնահատելու մոտեցումներ: Նման մոտեցումները սուր քննադատության ենթարկվեցին դաշնակցական մի շարք մտավորականների (մարտկոցականների) կողմից: Վերջիններս կուսակցության ղեկավարությանը մեղադրեցին նախապես հռչակված սկզբունքներին չհետևելու, «թուրքամետ» քաղաքականություն վարելու մեջ: Նրանց կարծիքով, «Պրոմթեևս»-ը չէր կարող ծառայել հայ ժողովրդի շահերին:

Դաշնակցության ղեկավար մարմինը, որ սկզբում բանակցել էր «Պրոմեթևս»-ի հետ, ստիպված եղավ հայտարարել, որ չի ընդունի ցանկացած «թուրքամետ» դիրքորոշում, իսկ իր հասցեին արված մեղադրանքներն անհիմն են: Անընդունելի

համարելով պրոմեթևականների մոտեցումները հայկական պահանջատիրության նկատմամբ՝ Դաշնակցությունը հրաժարվեց մասնակցել նաև վերջիններիս ստեղծած Ուխտին:

ХАЧАТУР СТЕПАНЯН
кандидат исторических наук, доцент

К ВОПРОСУ О СВЯЗИ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ФЕДЕРАЦИИ ДАШНАКЦУТЮН С ДВИЖЕНИЕМ "ПРОМЕТЕЙ"

РЕЗЮМЕ

В 20-ых годах XX века изгнанными кавказскими деятелями было создано движение "Прометей" целью которого являлось отделение Кавказа от Советского Союза. Армянская Революционерная Федерация Дашнакцутюн была приглашена присоединиться к прометеистам. Однако последние имели протурецкую ориентацию и в общих чертах были раскритикованы, а их предложение было отклонено. Основатели "Прометея" не захотели принять во внимание справедливые требования армян по отношению к Турции. Они напрасно пытались втянуть АРФД в борьбу против Советского Союза.

KHACHATUR STEPANYAN
PhD in History, Associate Professor

ON THE ISSUES OF RELATION OF THE ARMENIAN REVOLUTIONARY PARTY DASHNAKTSUTYUN TO THE MOVEMENT "PROMETHEUS"

SUMMARY

Movement "Prometheus" that was established by Caucasus pariah political leading actors in 1920s aimed at gaining independence of the Caucasus from the Soviet Union. Armenian Revolutionary Party Dashnaktsutyun was invited to join the movement refused and criticized the movement due to the latter's Turkish orientation. Founders of "Prometheus" did not take into account just demand rights of Armenians towards Turkey. In fact they failed to engage Dashnaktsutyun in struggle towards the Soviet Union.